ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. փետրվարի 28 -ին, N 42 -Ա

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի փետրվարի 13-ի N ԳՍ/21.1/4250-2023 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Արագածոտնի մարզպետի 2010 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական, ծրագրերի և վերլուծության բաժինների կանոնադրությունները հաստատելու մասին» N 14-Ա որոշման N 1 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) «1. **II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ»** բաժնի «լե» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «լզ» ենթակետը.

«լզ) ապահովում է մարզպետարանի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և մարզպետարանի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 3/1/2023 12:49:25 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ